

Երևանի Ա. Նալբանդյանի անվան հ. 196 հիմնական դպրոց

ՏՐՕՐԵՆ՝ Սեյմա Ա. Նալբանդյան

Ու. Մ. ԳՇՈՎ ՓՈՒՏՏՐՕՐԵՆ՝ _____ Ս. Դավթյան



01 09 2023թ.

01 09 2023թ.

Թ Ե Մ Ա Տ Ի Կ Պ Լ Ա Ն

2023 – 2024 ուս. տարի

ԱՈՒՐԿԱ ՍԱԹԵՄԱՏԻԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Լ. Սանուկյան

ԴԱՍԱՐԱՆ 6 – լր

ԴԱՍԱԳԻՐՔ՝ Նահապետյան, Արրահանյան

ՔՆՆԱՐԿՎԱԾ Է ՄԵԹՈՂՄԻՄԱԿԱՆՄԱՆ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. Վ 25 08 2023թ.
ՄՄ ՆԱԽԱԿԱՆ՝ Մուսիկ Հ. Դավթյան

2023-2024 ուստարի

6 – րդ դասարան

Մաթեմատիկա առարկայի տարեկան ուսումնական թեմատիկ պլան (շաբաթական 5 ժամ)

Ժամ	Կետ	Թեմա 1՝ Հարաբերություններ, համեմատականություններ, տոկոսներ (26 ժամ)
	Նպատակը	<ul style="list-style-type: none">• Հարաբերությունների, համեմատականությունների և դրանց կիրառությունների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների ձևավորումը:• Տոկոսի, տոկոսով խնդիրների և կիրառությունների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների ձևավորումը:
	Վերջնարդյունքները	<ul style="list-style-type: none">• Գրի և կարդա տառային արտահայտություններ, հաշվի նրանց արժեքը:• Գտնի միևնույն մեծությունների հարաբերությունը, տարբեր մեծությունների հարաբերությունը:• Բաժանի թիվը տրված հարաբերությամբ մասերի:• Սահմանի համեմատություն հասկացությունը, ճանաչի նրա անդամները, կազմի համեմատություններ:• Կիրառի համեմատությունների հիմնական հատկությունը, լուծի տրված համեմատությունը:• Սահմանի ուղիղ և հակադարձ համեմատականությունները, բերի առօրյայում հանդիպող համեմատականությունների օրինակներ:• Սահմանի տոկոս հասկացությունը, արտահայտի մասը տոկոսով և հակառակը:• Գտնի տրված թվի տրված մասը կամ տոկոսը:• Պարզի, թե մի թիվը մյուսի որ տոկոսն է, մեծացնի կամ փոքրացնի թիվը տրված մասով կամ տոկոսով:• Լուծի համեմատության անհայտ անդամը գտնելու, տրված թվի, մեծության տրված մասը կամ տոկոսը գտնելու, տրված թիվը, մեծությունը տրված մասով կամ տոկոսով մեծացնելու կամ փոքրացնելու, համատեղ աշխատանքի, հետաքրքրաշարժ և խաղային խնդիրներ:• Ծանոթ լինի մասշտաբ հասկացությանը, գտնի քարտեզի կամ հատակագծի կետերի իրական հեռավորությունը և հակառակը՝ օգտվելով մասշտաբից:• Կառուցի տրված պատկերի կետի, ուղղի նկատմամբ համաչափ պատկերները պարզ դեպքերում:• Բերի առանցքային համաչափությամբ օժտված պատկերների օրինակներ:
3	1	Տառային արտահայտություններ
3	2	Հարաբերություններ

3	3	Համեմատություններ և նրանց հիմնական հատկությունը
3	4	Համեմատությունների վերաբերյալ խնդիրների լուծումը
4	5	Ուղիղ և հակադարձ համեմատական կախումներ
1		Խնդիրների լուծում
1		Թեմատիկ աշխատանք 1
2	6	Տոկոսներ
6	7	Մասեր, տոկոսներ, խնդիրների լուծումը
1		Խնդիրների լուծում
1		Թեմատիկ աշխատանք 2
2	8	Մասշտաբ
		Համաչափություն
		Թեմա 2՝ Տվյալներ և տվյալների մշակում (18 ժամ)
Նպատակը		<ul style="list-style-type: none"> • Տվյալների հավաքագրման և գրառման տարբեր եղանակների մասին պատկերացումների ձևավորումը: • Երևույթների հավանականային բնույթի, պատահույթի և նրա հավանականության մասին պատկերացումների ձևավորումը: • Կիրառական խնդիրների լուծման հմտությունների զարգացումը:
Վերջնար- դյունքները		<ul style="list-style-type: none"> • Հավաքագրի տվյալներ (նաև ոչ թվային) և ներկայացնի աղյուսակի, սյունակային, գծային, շրջանային դիագրամների միջոցով: • Կարդա և մեկնաբանի անհրաժեշտ տվյալներ աղյուսակներից ու դիագրամներից: • Օգտագործի գծապատկերներ, աղյուսակներ, դիագրամներ խնդիրներ լուծելիս: • Գաղափար ունենա պատահույթի մասին: • Գտնի բազմակի ելք ունեցող պարզագույն իրադրություններում հնարավոր ելքերը և դրանցից առանձնացնի նշված պայմանին բավարարողները: • Հասկանա տարբեր իրադրություններում հնարավոր ելքերի հավանականային բնույթը և հաշվի նշված պատահույթի հավանականությունը: • Գտնի օրինաչափություն տրված հաջորդականության տարրերի միջև և այդ օրինաչափությամբ ավելացնի նոր տարրեր: • Կազմի ընտանեկան բյուջե և կատարի հաշվարկներ: • Տարբերի ասույթը ոչ ասույթից և հիմնավորի ասույթի ճշմարիտ կամ կեղծ լինելը:
2	11	Դիագրամներ

4	12	Գրաֆիկներ
3	13	Պատահույթ
3	14	Պատահույթի հավանականությունը
2	15	Խաղային և առօրյա խնդիրներ, նրանց լուծման հաշվեկանոններ
1		Խնդիրների լուծում
1		Թեմատիկ աշխատանք 3
		Թեմա 3՝ Ամբողջ թվեր (34 ժամ)
Նպատակը		<ul style="list-style-type: none"> • Ամբողջ թվերի մասին գիտելիքների, դրանց հետ գործողություններ կատարելու հմտությունների ձևավորումը, զարգացումը:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> • Սահմանի ամբողջ թվերը: • Գտնի ամբողջ թվի հակադիրը և բացարձակ արժեքը: • Համեմատի ամբողջ թվերը: • Անի թվաբանական գործողություններ ամբողջ թվերի հետ: • Կիրառի թվաբանական գործողությունների օրենքները, հատկությունները ամբողջ թվերով արտահայտության արժեքը հաշվելիս: <p>Թեմատիկ գրավոր աշխատանք⁴</p>
2	17	Բացասական ամբողջ թվեր
2	18	Ամբողջ թվերի շարքը և ամբողջ թվերի համեմատումը
2	19	Կոորդինատային ուղիղ
2	20	Հակադիր ամբողջ թվեր
3	21	Ամբողջ թվի բացարձակ արժեքը. Ամբողջ թվերի համեմատումն ըստ նրանց գրառման
1		Խնդիրների լուծում
1		Թեմատիկ աշխատանք 5
2	22	Ամբողջ թվերի գումարումը
2	23	Ամբողջ թվերի հանումը
2	24	Ամբողջ թվերի բազմապատկումը
2	25	Ամբողջ թվերի գումարման օրենքները
2	26	Ամբողջ թվերի բազմապատկման օրենքները
2	27	Ամբողջ թվերի բաժանումը

3	28	Կոորդինատային հարթություն
2	29	Գրաֆիկներ կոորդինատային հարթության վրա
1		Գործնական աշխատանք
1		Կրկնություն 1-ին կիսամյակի ամփոփիչ թեմատիկ գրավոր աշխատանք
2	31	Ռացիոնալ թվեր
3	32	Ռացիոնալ թվերի համեմատումը, գումարումը և հանումը
2		Խնդիրների լուծում
1		Թեմատիկ աշխատանք 6
4	33	Ռացիոնալ թվերի բազմապատկումը և բաժանումը
4	34	Ռացիոնալ թվերով գործողությունների օրենքները
2	35	Մեծությունների չափումը տրված ճշգրտությամբ
2	36	Ուղղանկյունանիստի մակերևույթը և նրա մակերեսը
3	37	Ուղղանկյան մակերեսը և ուղղանկյունանիստի ծավալը
2		Խնդիրների լուծում
1		Թեմատիկ աշխատանք 7
Ժամ	Կես	Թեմա 4` Հավասարումներ (10 ժամ)
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Հավասարումների և պարզ հավասարումների հանգող խնդիրների լուծման հմտությունների ձևավորումը, զարգացումը:
Վերջնարդյունքները		<ul style="list-style-type: none"> Լուծի մեկ անհայտով պարզագույն գծային հավասարումներ: Լուծի խնդիրներ նաև հավասարում կազմելով: Առանձնացնի խնդրի պայմանը և պահանջը, անհայտ և հայտնի տվյալները: Կազմի խնդրի լուծման քայլաշար:
4	38	Մեկ անհայտով հավասարումներ
4	39	Հավասարումներին հանգող խնդիրների լուծումը
2	40	Ճշմարիտ և կեղծ ասույթներ
2		Խնդիրների լուծում
1		Թեմատիկ աշխատանք 8
		Թեմա 5` Տասնորդական կոտորկաններ (34 ժամ)
Նպատակը		<ul style="list-style-type: none"> Տասնորդական կոտորակների մասին գիտելիքի ձևավորումը: Տասնորդական կոտորակները համեմատելու, դրանցով թվաբանական գործողություններ անելու հմտությունների ձևավորումը: Տասնորդական կոտորակը մինչև նշված թվային կարգը կլորացնելու հմտության ձևավորումը:

Վերջնար- դյունքները	<ul style="list-style-type: none"> • Գրի տասնորդական կոտորակը սովորական կոտորակի տեսքով և հակա- ռակը (եթե արդյունքը վերջավոր տասնորդական կոտորակ է): • Համեմատի տասնորդական կոտորակները: • Անի թվաբանական գործողություններ տասնորդական կոտորակների հետ: • Կլորացնի բնական թիվը և տասնորդական կոտորակը մինչև նշված թվային կարգը: • Արտահայտի միևնույն մեծության չափման միավորները մեկը մյուսով, նաև տասնորդական կոտորակներով: 	
2	42	Տասնորդական կոտորակներ
2	43	Տասնորդական կոտորակների դիրքային գրառումը և նրանց ընթերցումը
2	44	Սովորական կոտորակների հիմնական հատկությունը և տասնորդական կոտորակները
2	45	Միևնույն նշան ունեցող տասնորդական կոտորակների գումարումը
2	46	Տասնորդական կոտորակների համեմատումն ըստ նրանց դիրքային գրառման
2	47	Տասնորդական կոտորակների հանումը և գումարումը Թեմատիկ գրավոր աշխատանք 9
2	48	Տասնորդական կոտորակների բազմապատկումը
3	49	Տասնորդական կոտորակների բաժանումը
2	50	Տասնորդական կոտորակների կլորացումը
6		Խնդիրների լուծում
1		Թեմատիկ աշխատանք 10
8		Խնդիրների լուծում
1		<i>2-րդ կիսամյակի ամփոփիչ կրկնություն</i>
3		<i>Կրկնություն</i>